

**Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ  
ՇՈՂԱԿԱՁ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ  
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 օգոստոսի 2005 թ.)

«Թագաւոր երկնատոր, զեկեղեցի քո անշարժ  
պահեա...»:

«Երկնակոր Թագաւոր քո եկեղեցին անշարժ  
պահիր...»:

(Շարական)

«Յանուն Նօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. ամէն»:

Միրելի հավաքացյալ և բարեպաշտ քոյլեր և եղբայրներ, այսօր մեզ համար համագույն փոն է: Այսօր ազգովին կանգնած ենք ասրվածային ու երաշափառ դեսիլքի առջև, երբ Ասրծո Միածնին Որդին իշավ Հայաստան աշխարհ և ոսկե մուրճով հարվածեց սանդարամների մնիյանին ու հաստափեց հայոց հոգևոր ինքնությունը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ասրվածորդու իշման այս փոնը կապվում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի դեսիլքի հետ, որի մասին Ազարանգեղոսն այսպես է գրում. «Գիշերվա կեսին հանկարծակի սասրիկ ծայն եղավ, որովման թնդյուն: Բացվեց երկնքի հասրափության խորանաշեն ծածկը և ...դեսա մարդկային մի ահավոր կերպարանք, բարձր ու ահեղ, որն առջևից էր ընթանում և վերևից մինչև ներքն վայրէջի առաջապահն էր: Նա ծեռքին ուներ ոսկե մի մեծ մուրճ, և բոլորը Նրա երկնից էին զայիս: Ինը զայիս էր սլանալով, խոյանալով արագաթն արծվի նմանությամբ ու իշավ հասավ մինչև երկրի հափակը, քաղաքի մեջփեղը, խիեց լայնաբարած գերինին, որից մեծ ու անչափ թնդյուններ հնչեցին անդունիների սանդարամներից»:

Ըստ դեսիլքի՝ երկնքի հասրափաշեն խորանի բացվելը նշանակում է՝ Ասրծո մարդասիրության հայփոնումը երկրայիններին: Մեծ թնդյունը նշանակում է, որ ասրվածային ողորմության անձրևը վերսպին ցողվում է մարդկանց վրա: Լոյսի սասրիկ հեղումը բարձունքից, որը լցոնում է ամբողջ երկիրը, նշանակում է՝ Լոյսի քարոզությունը և Ավելարանի դարածումը երկրավորների մեջ: Իսկ լուսեղեն գործը, որ իշնում է լոյսի հետ միասին, երևաց ի պարիվ նահապակների, նաև մարդկանց խրախուսելու ու մեզ հետ լինելու համար:

Իսկ ահավոր ու շքեղ Այրը, Ով գնում էր լոյսի առջևից և իր ծեռքի ոսկի մուրճով հարվածեց սանդարամներին, Ասրծո Տեսչությունն է, Ում հայացքից դղրդում է երկիրը և անդունիներում սուզվում են սարանայի ողջ մոլորազները: Երկրի հնչելը նշանակում է՝ մարդկանց հնազանդությունը Կենաց խոսքի քարոզությանը:

Եվ ապա Տերը Գրիգորին իրամայում է ցոյց փված դեղում Ասրծո անվան համար դարձար կառուցել:

Այս գետիքից հետո Լուսավորիչը շարունակում է ուսուցանել ժողովրդին և ասում է Տրդապ թագավորին, որպեսզի զան և կառուցեն լուսի Սուրբ Խորանը, ըստ գետիքի օրինակի: Այսպես ամբողջ գիեղեղքի առջև, Հայաստանում, այն գեղում, որ Տերը հարվածեց ուսկէ մուրճով, կանգնեցվում է Կաթողիկէ եկեղեցին, որի նկարագիրը երկնքից ցոյց պրվեց մեր հավատքի հայր կենդանաչարչար Ս. Գրիգորին:

Այն, սիրելիներ, մեծ փոն է այսօր մեզ համար, փոն, որ բոլորին ի մի է բերել այսպես՝ միասին աղոթելու և խնդրելու Աստծուց անշարժություն և անսասանություն մեր Ս. Եկեղեցն ու համար:

Եկեղեցին հոգևոր է ու մարմնավոր: Հոգևոր հավարացյալ ժողովուրդն է, իսկ մարմնավոր՝ քարեղեն գաճարը: Եթե գաճարը նյութեղեն չիներ, ապա մարդու համար բնակավայր չէր լինի, իսկ եթե սրբված և օծված չիներ՝ Աստված այնքեզ չէր բնակվի, քանզի Աստված սուրբ է, և գաճարը ևս սուրբ պիտի լինի: Այս պարբառով Եկեղեցին կառուցելուց հետո պետք է սրբել և օծել: Նախ սրբել, որովհետք մարդու հանցանքների պալքառով անհծվեցին բոլոր գրարերը՝ հողը, քարը, փայտը, ջուրը և այն ամենը, որոնցով կառուցվում է Եկեղեցին, ապա օծել, որպեսզի Սուրբ Հոգու շնորհները իշնեն Եկեղեցու վրա, ինչպես Պետքելուստեի օրն իշան Վերնապան վրա:

Եկեղեցին նաև Աստծո փառքի գաճար է կոչվում, սակայն սա հրեական գաճարի նման միայն մի գեղում չշինվեց, այլ գերազույն հրաշագործությամբ կամար կազմեց գիեղեղքի բոլոր անկյուններում, որում ոչ միայն փառքերի լուսն է երևում, այլև Ինքը՝ փառքերի Տերն է հայքնում, ըստ Սաղմոսերգուի հեքիչյալ խոսքի. «Աստված հայքնում է Իր գաճարում» (Սաղմ. ԽՀ 4): Աստծո գաճար է կոչվում նաև մարդն ըստ Պողոս առաքյալի խոսքի, որ՝ «Աստծո գաճար եք դուք, և Աստծո Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորնթ. Գ 16):

Եկեղեցին Մայր է կոչվում հոգևոր ծնունդների համար, քանզի բազում զավակներ է ծնում հոգևոր առաքինությամբ: Եվ ինչպես մայրը ծննդաբերելուց հետո իր որդիներին սնում է մինչև կարարյալ հասակին հասնելը, այնպես էլ Եկեղեցին կերակրում է իր զավակներին մինչև նրանց Քրիստոսի կարարյալ հասակին հասնելը (փես Եփես. Դ 13):

Եկեղեցին Մի է զանագան իմաստներով: Այսպես՝ մի է իր հիմքով, մի է իր հավաքրով, մի է իր առաքելությամբ կամ նպագրակով (Եփես. Դ 4-5): Եկեղեցու միության խորը Քրիստոսի Անձն է և այն հավաքը Քրիստոսի աստվածության վրա, որով Պետքրու առաքյալը խոսդովանեց Քրիստոսին իբրև Աստծո Որդի:

Եկեղեցին Սուրբ է նախ իր գիշով՝ Քրիստոսով: Սուրբ է նաև իր բնույթով, որպես աստվածակառույց հաստափություն: Սուրբ է նաև իր նպագրակով և առաքելությամբ: Սրբությունը հավաքացյալների ամբողջությանը՝ Եկեղեցուն է ասվում մկրտությամբ՝ ըստ Պողոս առաքյալի հեքիչյալ խոսքի. «...Քրիստոս սիրեց Եկեղեցին և Իր անձը մաքնեց նրա համար, որ սրբացնի ավագանի մաքրությամբ՝ խոսքով, որպեսզի նա Իր առաջ փառավոր կերպով կանգնեցնի Եկեղեցին, որ ոչ մի արագ կամ աղքեղություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անարափ» (Եփես. Ե 25-27):

Եկեղեցին սրբություն է և Եկեղեցու անդամների մեղավոր կամ մոլոր ընթացքը չի Ժիշում այն իրողությունը, որ Եկեղեցին ըստ Եւրայան սուրբ է: Նոյնիսկ ավելին, Եկեղեցին ոչ միայն սուրբ է, այլև սրբարար, որի համար էլ մեղավորները կփրված չեն Եկեղեցու անդամակցութ-

յունից: Քրիստոս նրանց համար եկավ, և եկեղեցին է նրանց համար կա: Եկեղեցու սրբության այս գործնական հանգամանքի դրական փասփերը կարող ենք գտնել այն սրբակյաց անձերի մով, ովքեր դարերի ընթացքում և մինչև այսօր Եկեղեցու փառքի լուսաշղող պահին են կազմում:

Եկեղեցին Ընդհանրական է կոչվում դարձյալ նրա համար, որ Քրիստոս իր մեջ ունի համայն մարդկությունը: Եկեղեցին կոչվում է նաև կաթողիկե համաժողով, որովհետո Սրբարար Հոգին լուսարար մկրտչությամբ ավագանից երկնեց Աստծուն ժառանգներ և նրանց հնագանդությամբ մի դեղում ժողովեց:

Եկեղեցին նաև Առաքելական ենք անվանում զիխավոր երկու իմաստներով. առաջին՝ առաքյալներից է սկիզբ առել իր ծագումը, և երկրորդ՝ առաքյալների հավաքրի և ավանդության ժառանգորդն է այն:

Եկեղեցին նաև երկինք է երկրի վրա, որովհետո Աստված մարդացավ, Երկնավորը դարձավ երկրավոր, և մենք, որ մի ժամանակ հեռացած էինք Աստծոց, Քրիստոսի Արյամբ եղանք մերձավորներ: Քանի որ մարդուն Աստծոց մեղքն է բաժնում, Տերն Իր խաջով քանդեց Աստծոն և մարդկանց միջև եղող այդ միջնորմը, վերացրեց թշնամությունը, մարդուն Աստծոն հետ հաջթեցնելով խաղաղություն հասպարեց և մեզ արդունություն փունց Աստծուն Հայր կոչել:

Սիրելի հավաքանցյալներ, որպես Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու անդամներ և հայ ժողովրդի զավակներ, հավաքարիմ մնանք մեր արմադիներին և մեր Մայր Եկեղեցին անշարժ պահենք մեր կենցաղավարությամբ ու մեր բարի գործերով և մեկ անգամ ևս միասին աղոթենք Աստծուն մեր Ս. Եկեղեցու անսասանության և հասպարության համար՝ ասելով. «Թագաւոր երկնաւոր զեկեղեցի Քո անշարժ պահենա...»:

«Ճնորհը, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամեննեսեանս. ամէն»: